



ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԶՈՒՅԳ ՀԱՏՈՐՆԵՐ

Վերջերս, գրեթե միաժամանակ, Երևանի պետական համալսարանի և «Սովետական գրող» հրատարակչություններն ընթերցողների սեղանին դրին միջնադարյան հայ մատենագրության երկու ականավոր գործիչների՝ Ղազար Փարպեցու և Ղևոնդ Պատմիչի հատորները¹: Առաջինը ներկայացնում է Փարպեցու «Պատմություն Հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկերի գրաբար-աշխարհաբար համադրական հրատարակությունը՝ ծանոթ գրող Բագրատ Ուլուբաբյանի թարգմանությամբ, ծանոթագրություններով, իսկ երկրորդը՝ Ղևոնդի «Պատմութեան» (կամ «Ժամանակագրութեան») միայն աշխարհաբար թարգմանությունը, այլև ներածություն, ծանոթագրություններ՝ հեղինակավոր բանասեր-պատմաբան Արամ Տեր-Ղևոնդյանի աշխատասիրությամբ:

Այսպիսով «Սովետական գրող» հրատարակչությունը շարունակում է «Հայաստան» հրատարակչության հիմնադրած «Հայ մատենագիրներ» մատենաշարի բարի ավանդույթները, իսկ Երևանի համալսարանի հրատարակչությունը, հայագիտական կենտրոնի եռանդուն աջակցությամբ, ձեռնամուխ է ե-

ղած լինում «Ուսանողի մատենաշարի» ծավալման շահեկան գործին:

Անգնահատելի է հայ մատենագրական (և ոչ միայն մատենագրական) կոթողները թարգմանաբար մերօրյա ընթերցողի սեփականությունը դարձնելու գործի մշակութային-պատմական, այլև դաստիարակչական նշանակությունը: Ավելին. մեր հայ մատենագիրների երկերի նաև ռուսերեն թարգմանությունը, որին նվիրվեցին հանգուցյալ ակադեմիկոսներ Հովսեփ Օրբելին, Կարո Մելիք-Օհանջանյանը և այժմ իր բեղմնավոր գործունեությունը շարունակող, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը, — մեր դպրության երանելի մեծերի համար ճանապարհ է հարթում դեպի համաշխարհային մշակույթի գանձարանը:

• •

Ղազար Փարպեցու թարգմանիչ Բագրատ Ուլուբաբյանը բավական ծանոթ է մեր նախնյաց լեզու գրաբարին, ինչպես նաև իր թարգմանած հեղինակի հետ առնչվող բանասիրական գրականությանը: Այս վերջինը պարզ երևում է գրքի ծանոթագրություններում, հակառակ որ այստեղ գերակշռում են ավելի տեղանունների, անձնանունների ընդարձակ բացատրությունները, քան թե բնագրագիտական դիտողություններն ու մեկնությունները:

Ուլուբաբյանը հիմնականում ճիշտ է հասկանում գրաբար բնագիրը, և նրա թարգ-

¹ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982. Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982 (Խմբ.):

մանության մեջ գրեթե բացառվում են պատմական իրողությունների թյուր ըմբռնումները: Այս թարգմանության միջոցով մեզ է ներկայանում Ե դարի վերջերի և 2-ի սկզբի հայ խոջոր մատենագիրը՝ Ագաթանգեղոսի և Բուպանդի գործերի արժանավոր ժառանգորդն ու շարունակողը, որի՝ հատկապես իր ապրած տարիներին վերաբերող պատմական նկարագրությունները անգնահատելի աղբյուր են մեր պատմագրության համար:

Առանձնապես հաջողված կտորներ են Արարատյան դաշտին ու նրա բնակչության կենցաղին և սովորույթներին (գլ. Է), Մեսրոպ Մաշտոցի առաքելությանը (գլ. ԺԱ), Սահակ Պարթևի տեսիլքին ու նրա մեկնությանը (գլ. ԺԵ), Վաղարշ թագավորի ու ըսպարապետ Վահան Մամիկոնյանի պրոպյան (գլ. ՂԴ) նվիրված էջերը:

Սահակ Պարթևի տեսիլքը, համեմատությունները պահելով և բովանդակության տարբերությունն արձանագրելով, իր ձևի մեջ հիշեցնում է Եսայի մարգարեի տեսիլքը «Հին Կտակարանից»:

Վահան Մամիկոնյանին ձևված էջերը սուկ տուրք չեն մեկենաս նախարարի մեծությանը, այլ ավելի շուտ գովք՝ պարսից լծի դեմ դրոշ ու սուր բարձրացրած և ի վերջո հաղթանակած հայ ապստամբների մարտիկին, որ արժարժ է պահում Վասակ, Մուշեղ, Վարդան Մամիկոնյանների ժողովրդանվեր ոգին:

Եվ իսկուր չէ, որ Փարպեցու (ինչպես առհասարակ մեր պատմագիրների) երկերը, գրաբար բնագրով, դիտվում են իբրև մի-մի գեղարվեստական ստեղծագործություն: Դրանք, աշխարհաբար թարգմանությամբ, դեռևս շատ ու շատ են պիշում բնագրերի գեղարվեստական արժեքին: Սա վերաբերում է ոչ միայն ներկայացվող հատորներին, այլև մինչև այսօր լույս տեսած գրքերի մեծ մասին: Անկախելի էր, որ շնորհալի արձակագիր Ուրբաբյանը գոնե այս տեսակետով առաջ անցած լինել իր նախորդների փորձից:

Այս առումով համեմատաբար ավելի լավ է կարդացվում «Թուղթը», որն աշխարհաբարի վերածելիս Ուրբաբյանն օգտագործել է Միքայել Նալբանդյանի գեղեցիկ թարգմանությունը՝ մեկնություններով: «Թուղթը» մեր օրերի եկեղեցական (և ինչո՞ւ միայն եկեղեցական) գործիչներին ուսանելի դասեր է տալիս առաջադեմ դատողությունների, արդարամտության, հասարակաց գործին իսկական նվիրվածության:

Գրքում բավական թիվ են կապում թարգմանական վրիպումները, որոնց մեծ մասը կապված է մի երևույթի հետ, որ բանասիրության մեջ անվանում են «թարգմանչի կեղծ բարեկամներ»: Խոսքը վերաբերում է

այն դեպքերին, երբ թարգմանիչն անտեսում է բառերի՝ տվյալ պարագային գրաբարյան իմաստները և դրանք (բառերը) նույնությամբ թողնելով իր խոսքի մեջ՝ խանգարում է բնագրի ճիշտ ընկալման:

Այսպես, գրաբարի բանառը հօտը նույնությամբ թողվել է աշխարհաբարի մեջ (էջ 9). մոռացության է տրվել, որ բանառը գրաբարում նշանակում է «բանական, մտածող», աշխարհաբարում՝ «բերանացի»: Ուստի աշխարհաբար կարդացողի ընկալմամբ բանավոր հօտը բոլորովին չի կարող բնագրի գաղափարը պարթեցնել:

Այդպես նաև պաշտօնը (գրաբարում՝ «պաշտամունք») ամենուրեք թողվել է նույնությամբ: Դժվար է պատկերացնել, թե ի՞նչ պիտի հասկանա ընթերցողը, երբ կարդա, ասենք, հետևյալ հատվածը. «... և որոնցն են և՛ որդեգրությունը, և՛ փառքը, և՛ կրակարանները, և՛ օրենքները, և՛ պաշտոնը, և՛ ավետիքը» (էջ 121): Կամ պաշտոն կատարել արտահայտությունը (էջք 301, 307): Կամ որ ավելի պարմանալի է, պաշտամունք ժամին կապակցությունը (էջ 481), ուր, չգիտես ինչու, նույնությամբ թողված է մեր օրերում բոլորովին անծանոթ հոլովածը՝ պաշտամունք (=պաշտամունքի):

Երբեմն համանուն մի բանի բառեր մեկտեղվում են և բոլորովին անմատչելի դարձնում հատվածը. «...իրենց իսկ պարանոցներից արյուն հեղելը Քրիստոսի ընտրյալ բանավոր հոտի վրա ('): Նախարարների ընկերակիցներից և այլ ազատ (=ազնվական) մարդկանցից ոմանց հրաժարվելը սուրբ ուխտից և լուցկի (=մարխ) դառնալը հավիտենական այն անջեջ հրին...» (էջ 9): Ավելացնենք, որ ազատը ամենուրեք ազատ է մուսցել, լուցկի-ն՝ լուցկի:

Հետո, ի՞նչ է նշանակում արյուն հեղող հոտի վրա: Գրաբարում հեղումը պարուն ի վերայ ուրուք դարձվածք էր և, ինչպես դենմ վանձն ի վերայ ուրուքը (էջ 122-123), նըշանակում էր «արյուն թափել կամ անձը պոհել մեկի համար (և ոչ թե մեկի վրա)»:

Կամ համեմատենք այս հատվածները. «... միաբանեալ ի խնդիր բարի ցանկութեան, ընդ որս հաւանեալ եւ այլ արք ճշմարտութեան նուիրիչք՝ գնային խառնել ի գունդն պօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնեանի» (էջ 308) — «...միաբանելով բարի ցանկության գործին ('), նրանց հետ էլ ուրիշ մարդիկ, որ ճշմարտությանն էին նվիրված, գնում էին խառնվելու Հայոց պորավար Վահան Մամիկոնյանի պորքին» (էջ 309):

Գրաբարում ի խնդիր, որ բառացի նշանակում է «փնտրելու համար», իբրև նախադրություն օգտագործվում էր «հանուն» իմաս-

տով (միաբանեալ ի խնդիր բարի ցանկութեան—միաբանելով հանուն բարի ցանկության) :

Վահանայ Մամիկոնեից տեառն-ը դարձել է Վահան տեր Մամիկոնյանի (էջ 9) կամ Մամիկոնեից տեր Վահան Մամիկոնյանը (էջ 427, մի քանի անգամ), փոխանակ Մամիկոնյանների կամ Մամիկոնեից տեր Վահանի և այլն, ինչ որ ճիշտ ձևով կա մեկ ուրիշ Մամիկոնյանի՝ Վարդանի տիտղոսի մեջ (էջք 123, 167) :

Անձնացեաց-ը դարձել է Անձնաց (էջք 177, 307, նաև տեղանունների ցանկում էջ 526), Գարշոյլ-ը (=Գարշոյլ)՝ Գարշոյլ (էջք 295, 301—303, նաև անձնանունների ցանկում էջ 522: Հմմտ. Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. Ա, Ե., 1942, էջ 450): Աթանագիսես-ն էլ դարձել է Աթանագիսես (էջ 490: Դարձյալ հմմտ. Հ. Աճառյանի նույն հատորը, էջ 67): Չգիտես ինչու Աստված հատուկ անունը, հակառակ լեզվական ավանդույթի, գործ է ածվել նաև որոշյալ առումով (օրինակ՝ էջ 479-ում)...

Վստահ ենք, որ քննարկվող գիրքը նրա վերջին հրատարակությունը չի լինելու, և որ Բագրատ Ուլուբաբյանը դեռ ձեռնամուխ կլինի այլ գրքերի էլ թարգմանության, որոնց մեջ նման վրիպումներ տեղ չեն ունենա:

*
*
*

Ղևոնդի թարգմանիչ Արամ Տեր-Ղևոնդյանն այս գործին ձեռք է վարկել իր ետին ունենալով ժամանակի (է—Ը դարերի) պատմություններ վերաբերող շահեկան աշխատություններ (որոնցից մեկը թարգմանված է ռուսերեն և անգլերեն), ծանոթանալով ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն, արաբերեն աղբյուրներին, Կ. Շահնավարյանցի, Ն. Ալիկյանի, Ք. Պատկանյանի, Լեոյի, Հ. Մանանդյանի բանասիրական ու պատմագիտական դիտողություններին, համեմատելով Սեբեոսի, Շիրակացու, Կաղանկատվացու, Դրասխանակերտցու, Արծրունու, Ուտհայեցու, Ասողիկի, Գանձակեցու, Վարդան Պատմիչի վկայությունները:

Նա գիտական հասարակայնությանն էր ներկայացրել Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց»-ի արաբերեն թարգմանության ձեռագիրը, ինչպես նաև աշխարհաբար թարգմանությամբ լույս էր ընծայել նույն այդ գիրքը (Ե., 1977): Այս բոլորը նրան բնականաբար օժտել էին այնպիսի հմտությամբ, որ կարողանար հարապատրոն հասկանալ ու վերարտադրել Ղևոնդի երկի ոչ միայն տողերը, այլև, ինչպես ասում են, դրանց արանքում եղածը: Այդ են վկայում, մասնավորապես,

անկյունավոր փակագծերում [] Վետեղված այն անհրաժեշտ հավելումները, որոնք կոչված են ոչ միայն ամբողջացնելու աշխարհաբարի վերածվող նախադասությունները, այլև բացահայտելու, ըմբռնելի դարձնելու պարբերության իմաստը, գաղափարը: Սիւս մի հատված 54-րդ էջից. «Իսկ որ ասում են, թե «մանկային իմաստությամբ գրված գրքեր են», գիտեմ, որ կամենում ես բամբասել Եւրի երկրորդ [սմբագրման հարցը]: ...Եվ երբ ամբողջ [իրեա] ժողովուրդը այն երկրներին, ուր սփռված էր, վերադարձավ Երուսաղեմ, իր հետ բերելով գրքերը, այնտեղ երևացին Աստուծո հրաշալի գործերը, քանի [համեմատելով] հին գրքերը Եւրի [սմբագրած] պատմության հետ՝ ոչ մի պակաս չգտնվեց»:

Ընդգծված թարգմանչական հավելումները կարող էր կատարել այն մարդը միայն, որ քաջատեղյակ է շարադրված նյութի խորքերին:

Արամ Տեր-Ղևոնդյանը գերի չէ գրաբար բնագրին. նա հետամուտ է ամենակարևորին՝ Ղևոնդի խոսքերը ճշտորեն վերարտադրելու ճիշտ աշխարհաբարով: Այս նպատակով երբեմն ընտրում է նույնիսկ բնագրի բառերից արտաքուստ հեռու հոմանիշներ՝ չմոռանալով, սակայն, գիտական բարեխղճության պահանջը և տողատակ ծանոթագրություններում հիշելով բնագրի այն բառը կամ արտահայտությունը, որոնց իմաստի վերարտադրման ժամանակ ինքն ապատ է վարվել (հմմտ. էջք 90, 95, 108, 112...):

Գրքի ընդարձակ ներածությունը (էջ 3—17) վեր է հանում այն նորը, որ մոժում է հայ պատմագրության մեջ Ղևոնդի իր մեծարժեք երկով: Ը դարի հեղինակը հատկապես ուժեղ է ժամանակով իրեն մոտ պատմական իրադարձությունների հարապատ վերարտադրումով, արաբական խալիֆաների (ամիրապետների) առաջին ժամանակագրությամբ, հայկական թվականության առաջին օգտագործմամբ, Բյուզանդիո Լևոն Գ Իսավրացի կայսեր (717—741) և արաբ խալիֆ Օմարի (717—720) դավանաբանական նամակագրության միջոցով. քրիստոնյա—մահմեդական առաջին հակաձառակական գրվածքը ներկայացնելով: Այս կետերից ոմանք որոշակի արժեք են ներկայացնում նաև համաշխարհային պատմագրության համար:

Ղևոնդն իր երկում ընդգրկում է արաբական արշավանքների շրջանը, պատմությունը հասցնում մինչև 788: Նրա հիշած ժամանակագրական տվյալները հաստատվում են այլ, նաև օտար աղբյուրներով: Այս հանգամանքը ևս մեծացնում է գրքի արժեքը:

Ղևոնդը հայրենաշունչ տողերով ցույց է

տալիս, որ արաբական գերիշխանության առաջին իսկ տարիներից մեր նախնիներն ընդվզել են օտար լծի դեմ, անգամ երբ գիտակցել են, որ իրենց դիմադրությունը հաջողության հույս գրեթե չունի (համեմատեցե՛ք մեջբերվող հատվածը): Այս առումով նա հույսիչ տողեր է նվիրել Գրիգոր Մամիկոնյանին, Սմբատ Բագրատունուն:

Իսկ Առնի ու Օմարի դավանաբանական վիճաբանությունը, որ բռնում է գրքի մոտ

1/3-ը, թարգմանական առումով էլ ամենահաջողված կտորներից մեկն է:

Գրքին կցված հարուստ ծանոթագրությունները պարունակում են մեծ թվով վիճելի մեկնությունների ճշգրտումներ և բանասիրական աշխատանքի ուսանելի նմուշներ են:

Ստորև ներկայացնում ենք մի քանի հատվածներ գրախոսվող գրքերից:

ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (թարգմ. Բագրատ Ուլուբաբյանի)

Գլ. է. Եվ այս ամենի մասին ինքն իրեն խորհելով, Արշակ թագավորը լքեց, թողեց իր նախնայաց բարի ու բնիկ ժառանգությունը՝ հողակապ, հոջակավոր, երևելի գավառն Այրարատյան, որն ամեն ինչ բուսցնող է, ամեն ինչ տվող, ամեն ինչով լի, մարդկային կյանքին, վայելքին ու երջանկությանն անհրաժեշտ օգտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող՝ դաշտեր լայնատարած ու որսալից, շուրջ բոլորը լեռներ գեղեցկանիստ ու փարթամ արոտներով ծածկված, կճղակաբաշխ ու որոճող անասուններով և նրանց հետ էլի ուրիշ բազմատեսակ կենդանիներով լեցուն: Լեռանց բարձր կատարներից ջրեր են հոսում լիովի ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ փարթամացած ուտանն են մատակարարում առատ հացով և գինով, անուշաբույր ու մեղրահամ բանջարեղենով և յուղատու պանապան սերմերով: Իսկ թե հայացքդ առաջին անգամ ես դարձնում դեպի լեռնափեղերը կամ սարահարթերը, ապա նրանց վրա սփռվածը հանդերձներ կկարծես և ո՛չ թե ծաղկաբույս երանգներ՝ տարածված փարթամորեն, անուշահամ ու պարարտ արոտներ, որոնց թանձրախիտ աճած խոտերն արոտական ընտանի անթիվ էշերին ու վայրի կատաղի կենդանիների խմբերին հագեցնելով՝ նրանց գիրացնում են, գավակները պարարտացնում, ճարպակալած մարմինները տոպեցնում: Իսկ անուշահոտ ծաղկանց բույրերը, որ քաջ նետաձիգ ու որսասեր տղամարդկանց և բացօթյա ապրող հովիվներին պարգևում են առողջություն, պորացնում են մտքի պայությունը և թարմացնում: Այնտեղ կան նաև տեսակ-տեսակ բույսերի արմատներ՝ դեղերի համար պիտանի ու օգտակար, որոնք ըստ ճարտարագետ ու հմուտ բժիշկների երկասիրությունների ճարտարագետ ճանաչողության՝ ախտերն արագորեն բուժում են իբրև սպեղանի և ցավերի մեջ

երկար տառապածներին պարգևում առողջություն:

Իսկ ամեն ինչով լի դաշտերն աշխատավորներին, ասես հմայիչ խոսքով, դեպի իրենց են քաշում և նրանց լիացնում ինչ-որ բարիքով, առավել փութացնում վերջնական դարձը դեպի իրենց: Նրանք ո՛չ միայն տեսանելիքով (տեսքով—Պ.Բ.) են ցույց տալիս իրենց շահավետությունն ու օգտակարությունը մարդկանց, այլև հմտորեն խուսարկող աշխատավորներին ցույց են տալիս երկրի տակ ծածկված գանձերը, որպեսզի նրանք հավաքեն ի շահ իրենց, ի վայելումն այս աշխարհի թագավորական մեծությունների և ի հաստատություն հարկահանների: Եվ այդ գանձերն են ոսկին ու պղինձը, երկաթն ու պատվական քարերը, որոնք ընկնելով արհեստավորների ձեռքը, թագավորներիս պուգում են գեղեցկատեսիլ պարդերով ու բանվածքներով, ինչպիսին են խոյրերի, թագերի ու հանդերձների վրա ընդելուպված ոսկեհոտ պաճուճանքները: Այլև լուծելով ջրերի մեջ, բնական մի առանձին անուշություն են հաղորդում ամեն տեսակ խորտիկներին: Բայց ամենաբաղձալի դաշտն Այրարատյան իր վրա (ծոցում—Պ. Բ.) պուր տեղը չի սնում եղեգնաձև բույսերի արմատները: Չէ՞ որ նրանցից ծնված որդերն էլ կարմրափայլ պարդերի գույներ են տալիս՝ օգտասերներին ընծայելով շահ ու շքեղություն: Իսկ գետերի ընթացքը՝ բազմատեսակ մեծամեծ ու մանր, տարբեր համի ու տեսքի ձկներով: Ուրախացնելով լցնում է հարստության շնորհները և հագուրդ է տալիս ժրջան ու անդանդաղ աշխատողների որովայններին:

Երկիրը, հուրախություն և ի վվարձություն որսատենչ ապատների, իր մեջ անապական ջրերով սնում է բազմատեսակ թռչուններ՝ կաղկաղող ու քաղցրաձայն, առապարասեր, վիմասույզ ու ծակամուտ կաքավների ու սալամբների երամներ, և կամ եղեգնաբնակ,

թփերում ու մացառներում թաք կացող պարտամարմին, անուշահամ վայրի տեսակն աքարների, այլև ջրասուպակ, մամռասներ, խոզակներ (խոզակակեր*—Պ. Բ.) մեծամարմին թռչուններ, փորը (կարապը—Պ. Բ.), թանձր ու սագը և այլապես, անթիվ-անհամար ցամաքային ու ջրային թռչունների բազմություններ: Իսկ նախարարների գունդը, ապատների որդիների հետ, թակարդների շրջափակությամբ, երագապինք (երագապ—Պ. Բ.)—ուռկաններով, հատուկ կողովներով որսի էին ելնում: Ոմանք ցիռների ու այծամների ետևից արջավելով՝ իրենց աղեղների մասին էին հորդորալից բարբառում: Ուրիշները, եղջերուների ու եղնիկների հոտերի ետևից ձիարձակ սլանալով, կորովաձիգ տղամարդկանց արիությունն էին ցույց տալիս: Մնացածներն էլ սուսերով, մեղմարտիկների պես, վարապների երամակն էին գետին տապալում, կոտորում: Եվ նախարարապուն շատ վանուկներն էլ, դաստիարակների ու ծառաների հետ, բազեններով տարատեսակ թռչուններ որսած, դարձյալ բերում էին, ճոխացնում ուրախության ընթրիքները: Եվ այս-

*խոզակակեր այսինքն՝ խոզակ (վայրի պտուղ) ուտող:

պես, յուրաքանչյուրը, որսով լիացած, գնում էր երջանիկ:

Ջրասուպակ ձկնորսների մանուկներն էլ, ըստ իրենց հանապազօրյա սովորության, քայլելով նախարարագունդ խմբի առջևից, բերում, իջխաններին ընծա էին մատուցում որսած ձկներից, գետի կղզյակներից բռնած վայրի թռչունների ձագեր կամ հավաքած ձվեր էին տալիս: Իսկ նախարարները, ընծայածների մասն ընդունելով հոծարությամբ, իրենք էլ նրանց էին առավել շատ պարգևում իրենց ունեցածներից: Եվ ամենայն բարիքներով լի՝ հասնելով իրենց ապարանքները, տանը մնացած աշխատավորներին, խռավել և՛ օտարներին, պարգևում էին կենդանի բերած, անբիծ որսերը: Տեսնելով են (Էր—Պ. Բ.) այս բոլորի ընթրիքների սեղանները, իրար վրա շեղջակույտ արած բալում էրենները, նրանց առջև դարսված գլուխները: Դրանցով ուրախացած խնդում էին ձրկակեր ու մսակեր մարդիկ, բայց անուշ խորտիկներից առավել ուրախանում էին հոգևոր կերակուրներով, սաղմոսներով ու նարգարեական երգերով օրհնում էին պարգևատու, ամեն բարիքներով աշխարհը լցնող Քրիստոսին: (Էջ 21—25)

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, «ԹՈՒՂԹ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ» (թարգ. Բագրատ Ուլուքաբյանի)

...Ամսիսթար կերպով ես վշտացած եմ մինչև մահ, որ գայլերի պես հարձակվեցին ունեցվածքիս վրա և անխնա գիշատեցին, երբ տեսան, որ ես ընկած եմ քո աչքից: Այժմ շրջում են իմ ունեցվածքով պնդված և ինձ էլ ծաղրի են ենթարկում: Բայց ինչ որ այդ վանքում է մնացել ինձանից, ուրախ եմ ու երջանիկ, քանի որ սուրբ ու հոգևոր վայրում է մնացել:

Ուրիշ բանասարկություններով ևս ջանացին քեզ վայրացնել իմ դեմ, տե՛ր. իբր, «մի մանուկ չի կարող հոգաբարձու լինել վանքին»: Եվ ինձ պաշտպանելու համար ո՛չ մի հրեշտակ մարմին չառավ, որպեսզի թերևս նա՝ հոգեղեն բնությամբ տեսներ թշնամիների լարած թաքուն որոգայթը, կարողանար պաշտպանել և հանձն առներ լինելու ինձ օգնական: Ո՛ւմ էլ վերցնում էի, իսկույն նրա մոտ

էին հասնում դավաճանության նենգիչները և անմաքուր խրատներ տալով՝ ասում էին. «Ո՛վ անմիտ մարդիկ, անօգուտ ինչո՞ւ եք աշխատում, այդ խորշակահար վանքում ինչո՞ւ պուր տեղը լալիս և խենթությամբ անձնամահ եք լինում: Չ՛է որ Մամիկոնյան տան ավագ ծառաներից ոմանք և մի ավագ քահանա, որ տանն է, երդումով մեզ խոսք են տվել, թե երբ էլ որ լինի, Ղապարին թույլ չենք տա նույնիսկ այդտեղ հանգստանալու, ո՛ր մնաց թե նրա մերձավորներից մեկին»: Եվ լսողներն էլ, այսպիսի խոսքերից թուլացած՝ այնուհետև ջանում էին ո՛չ թե վանքի, այլ իրենց ջալակի համար: Սակայն ես, մեղվի նման ամեն կողմից բերելով, թե՛ վատնողներին պահում և թե՛ վանքի պետքերն էի հոգում... (Էջ 471—473)

ՂԵՎՈՆԴ, «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (թարգ. Արամ Տեր-Ղևոնդյանի)

Գլ. ԼԴ. ... Այն ժամանակ մեր Հայոց աշխարհը մեծ տառապանքների մեջ էր, իսկ անհավատ թշնամիները ցնծություն և հրճ-

վանք էին ապրում: Նրանք ջունջ քաջելուց հետո դարձյալ հարձակվեցին, Ապահունիքի միջով ուղղվեցին դեպի արքունի՝ պողոտան:

Հասան Բագրևանդ գավառի Արձնի գյուղը և այնտեղ բանակ դրեցին գետի եզերքում, որը նրա միջով է անցնում: Նրանց հետ կային պինագործներ՝ ամեն տեսակ զենքերի արհեստավորներ, որոնք պատրաստում էին պատերազմի զենքեր ու սարքեր (անոթներ):

Իսկ այն գործը, որ Կարնո քաղաքն էր պաշարել, [բնակիչներին] հուսահատության էր հասցրել, քանզի սաստկացել էր քաղաքի սովը, և նրանք ստիպված պատրաստվում էին քաղաքը հանձնել: Սակայն երբ [հայկական] զնդի պարտության լուրը հասավ Կարնո քաղաք, այն ժամանակ հայոց պատերազմող զորքերը հուսալքվեցին և քաղաքի պաշարումը վերացրին: Նրանք թեպետև կարող էին հունաց կողմերը մեկնել և իրենց անձերը փրկել կեղեքիչների չարասեր ապիրատությունից, սակայն լավ համարեցին իրենց անձերի մահը, քան մեր երկրի կորուստը և Քրիստոսի եկեղեցիների անպատվությունը տեսնել: Այսպես մտածելով, թեկուզև սակավաթիվ էին, քան թշնամիները, ինքնակամ հոժարությամբ դեպի տառապանք դիմեցին և, հավաքելով իրենց զենքերը, որոնք 5000 հոգուց էին բաղկացած, հեռացան Կարնո քաղաքից, անցան Բասենի սահմանը դեպի Բագրևանդ գավառը: Հենց որ անցան Արածանի գետը, սրտի արիությամբ թշնամու վրա հարձակվեցին, [նախապես] իրենց աղխը (ունեցվածքը) և երիվարները երկու ասպարեզ հեռու թողնելով և իրենք հետիոտն, պայրագին պատրաստվեցին թըշնամու հետ պատերազմի: Թշնամիների զենքերը նույնպես ելան նրանց դեմ բազում պատրաստությամբ:

Արեգակը ծագելուն պես պատերազմն ըսկսվեց: Երբ իրար բախվեցին, նախ հայոց գունդը ուժգին բազում հարվածներ տվեց և, թշնամիներին փախուստի մատնելով, շատերին սատակեցրեց: [Սակայն] կրկին ուժ առնելով՝ նրաք փախուստից ետ դարձան և պայրագին ցասմամբ դիմադրելով՝ արհավիրքով լցրին ռամիկ ժողովրդի բազմությունը, փախուստի մատնեցին նախարարներից ու հեծյալներից ունանց և նրանց հետ եղած ռամիկներին, քանզի նրանցից շատերին ըսպանելով՝ դաշտերի վրա փռեցին:

Իսկ քաջահաղթ նահատակները, թեպետև սակավաթիվ էին չարաշուք որսողների մեջ, սակայն դառնաշունչ օրհասական թուփերն անի չմատնվեցին, այլ բոլորը միահամուռ հավաքվելով՝ իրար քաջալերում էին հետևյալ խոսքերով՝ «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների

սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի, ապա թող անեն, ինչ կկամենան: Մեր անձերը կոհենք ճշմարիտ հավատի փոխարեն և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր անհիվան դիմաց կա հավիտենական կյանք»:

Այսպես իրար քաջալերելով իրենց աչքերն ի բարձունս կարկառեցին, Բարձրալից օգնություն էին հայցում, ասելով՝ «Աստված, քո հայացքը մեզ ուղղիր և փութա մեզ օգնության: Թո՛ղ մեծապես ամաչեն նրանք, որ մեր անձերն են ուզում [կոհել], իսկ մենք, Տեր, քո անունն ենք արտասանում մեր նե, դուրսից մեզ և քո անունն ենք փառավորում մեզ պաշարող անձկության մեջ, քանզի ահա մեզ շրջապատված են պահում չարերը, որոնց թիվ չկա, և մահվան երկունքն է մոտենում մեզ»:

Այս և դեռ ավելի աղեյսական խնդրանքներ ու փափագելի մաղթանքներ էին մատուցում Բարձրալիին: Սրանից հետո դարձյալ պորանալով Վերնայինի օգնությամբ, ետ չկանգնեցին նախապես ընդունված որոշումից, թեև հապար հոգուց ավելի չէին երեսուն հապարի դիմաց: Եվ ինչպես հենց թշնամուց իմացանք, նրանք (հայերը), ասում են, իրենց հետ մարտակից ունեին հըրեշտակների բազմությունը, որոնք մարդկային կերպարանքով երևացել էին թշնամիներին: Նրանք հավաստում էին նաև, որ տեսնում էին երեցների ու քահանաների*, որոնք ավետարաններով, մոմերով ու խնկով առջևից երթալով՝ քաջալերում էին նրանց:

[Հայերը], անխնա կոտորելով, վրեժխնդիր էին լիտում թշնամուց, մինչև որ նրանց ձեռքերը միանգամայն հոգնեցին զենքերի ծանրությունից: Ունանք առանց զենքի մընալով՝ ընկան նրանց ձեռքը և իսկույն հրաժեշտ տալով մեղանչական կյանքին՝ դիմեցին հանդերձյալ հույսի ակնկալությանը: Այդ երանելի և քաջ նահատակները հետևյալ պորագլուխներն էին՝ Բագրատունյաց տնից Սմբատ սպարապետը և նրա բարձակից ու նիպակակից Սահակը: Մամիկոնյան տնից Մուշեղ պորավարը և Մամիկոնեից տեր Սամուելը, մատաղահասակ և գեղեցկությամբ առույգ, որը մեծ սպարապետի աներձագն** էր, Գնունյաց տնից Դաշույն Վահանը և բազում նախարարներ և ռամիկներ, որոնց մեկ առ մեկ անունով հիշել չեմ կարող: Մոտ 3000 հոգի ընկան, որոնց մահը սրտաճմիկ էր ու վախճանը՝ անագորույն, և հողը նույնիսկ բավական չէր պատերազմի թշվառ կոհերի դիակները թաղելու, այլ ընկած էին

* Բագրում՝ պապաս:

** Բագրում՝ աներ:

բացօթյա վայրում արևի ու փոշու, անձրևի և հողմերի մորիկի դիմաց:

Այն ժամանակ սաստկացավ հաճախակի ողբն ու կոծը Հայոց աշխարհում, քանզի մեծ առաջնորդները և պատվական զորագլուխները մի վայրկյանում վերացան, և ամբողջ երկիրը, խոր տխրությամբ վարակված, մեծապես կոծում էր և ողբում հզոր և քաջ նախամարտիկների վախճանը, որոնք օգնականությունից չուրկ մնալով՝ մատնվեցին գազանաբարո և անողորմ թշնամու ձեռքը: [Մարդիկ] իրենց նեղության մեջ հիշում էին նաև պաշտպան Աստծուն, որի ողորմությունը սկզբից էլ պահել է մարդկային ազգը և մանավանդ իր անունը փառաբանողներին: Հայցում էին նրա հոգատար ներողամտությունը,

որպեսզի այս աշխարհի կյանքում տարակուսյալներին և հուսակտուր եղածներին զորավիգ լինի, քանզի Արճեշ ավանում պատահած աղետից հետո ահա վրա հասավ այս չարիքը նույն Հրոտից ամսի 14-ին¹, երկուշաբթի օրը: Առավել ևս դժնդակ էր նեղությունը նաև այն պատճառով, որ ննջեցյալներին նույնիսկ համարձակորեն լալու և ողբալու հնարավորություն չկար, ոչ էլ իրավունք՝ իրենց տներում սգո հաց կտրելու կամ վախճանյալներին գերեզման դնելու: (Էջ 118—121)

¹ 775 թվականի Հրոտից ամսի 14-ը համապատասխանում է ապրիլի 25-ին:

